

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄՅԻ ԿԱՄ ԿՈՑԱՅԻՒ ՏԱՂԵՐԸ ԹՐԱԿԻՈՑ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՈՑ ՀԱՅՈՑ ՎՐԱՅՈՒՔ՝

Այս անգամ կը հրատարակեմ Սիլիստրէի վրայ անոր գրած մէկ տաղը:

Սիլիստրացի Յակոբ իրիցուն է պարսաւանք:
Եղբայրք եկէք ձեզ բան ասեմ, աւանջ դրէք ամենեքին՝,
թէ ինչ բաներ եղան պէյան՝, Սիլիստրացի տէր Յակոբին:
Հազար հարիւր քսան երկու ազգիս Հայոց թուականին:
Մեծի աւուր ճրագալուծին սուրը յարութեան յերեկոյին:
Իւրեանց մէջն սահման մի կայր, յաւուր երկու նաւակատին:
Կերակրեղէնք եւ ըմպելիք յեկեղեցին պատրաստէին:
Մեղրով շինած բախլաւանէր, զրախուն լաւն բերէին,
Երբ պատարագն որ արձակէր մեծի փոքրի բաժանէին:
Անպէս արին եւ այս տարին զոր ինչ սահմանք որ ունէին:
Վարդապետ մի հանդիպեցաւ իսկի խապար չէր այն բանին:
Վերակացուքն որ անդ կային վարդապետին հանեն բաժին,
Զհօռելի լաւ զումղումայն փախլաւայի մեծկակ սէնին:
Երբ մեծ էրէցն զայն լսեց գնաց զինչ խելք կայր ի զըլին:
Ան բերէք որ ես պահեմ, տանիմ սեղան վարդապետին:
Այն միամիտ վերակացուքն, հաւատացին նորա սրտին:
Թէ տէրտէրն սուտ չի խօսիր, աւագերէց տէր մղտեան:
Բերին զարախն եւ զփախլաւան, մեծ իրիցուն թէսլիմ արին:
Եւ նա առեալ եղիր տօլապն, մինչեւ հանցէ զսգեստն անձին:
Գանձի նա ինքն էր ժամարար, ձեռլին թաթախ սուրբ խորհրդին:
Շուտով ձգեց զսգեստն ի վայր, դողեր ելեր ոտվին ձեռլին:
Թէ երբ կարեմ տանել ի տուն, մարդ չիտեանէ մուկն ի մըթին:
Մէջ մի չկայր զայն զողանայր հրեշտակք ի վեր զարմանային:
Գայ ի սեղան բազմի յնդրիս որպէս Յուդայ նենգն ի սրտին
Ան իսկի մարդ չիմացաւ ուրախանայր ի յիւր մըտին:
Թէ զփախլաւան հետ արախուն, որ թագուցի տեղով մթին: *

1. Ա. ին մտք այս տաղերուն՝ հրատարակուած է Բազմավէպ 1929 էջ 288, որ առեմն տեղեկութիւններ ալ տուած էի Սօֆիայի Հայ գաղութին վրայ, Կաֆացիի Սօֆիայի վրայ զրած տաղին հրատարակութեան հետ. հաս կ'ուզեմ սա յաւելումներն ընել:

Ա. Սօֆիայի տաղանագրիւր հրատարակուած են Հանդէս Ամսօրեայի մէջ 1923, էջ 170-171, Թիւով 11 (Իրաւ պէս 12) արձանագրութիւն. անկէց անկախ եւ առանց նախապէս հրատարակուածն տեղեկութիւն ունենալու եւ ալ ինծի զրկուած ուրիշ օրինակն մը հրատարակեցի (Բազմավէպ 1929 էջ 115). Սօֆիա զոնուած լըլըլով, ուրիշի կողմէ ինծի զրկուած արտագրութիւնն օգտուած եմ. ըստ իս Տէրա Գր. Իսթիճեանի հրատ.ը Հանդէս Ամսօրեայի մէջ նախընտրելի է:

Բ. 1898ին կատարուած մարզահամարին համաժայն Սօֆիայի մէջ կային 108 հայեր, հաւանաբար միայն պուլկարահպատակներէն:

Գ. 1761ին Կը յիշուի Սօֆիայի տէր Մարտիրոս Նորընծայ քահանան, Կ. Պոլիս Գրիգոր զպիր Մարգարանցիի 1708ին հրատարակած խորհրդատարին մէջ կայ ժեռագիր սա յիշատակարանը. Ը... Թովին 1210 (1761)ին յուլիսի

Այս գիշերան բանն բուսաւ, վաղեան հերիք է նա՛ ինձ բաժին։
Երբ առաւօտն լուսացաւ, աւարտն եղաւ պատարագին։
Եկին բերողքն կերակրո՛ց հարցին զդալա՛ն ու զմեծ սննին։
Այս բաներուս մարդ չէր խա՛պար, ոչ փորձաւորք վարդապետին։
Ասէն թէ մեք ո՛չ եմք տեսեալ, ո՛չ փախլաւան ո՛չ զարախին։
Նորա՛ լեւալ աղ՛կեցան տնէ ի տուն հարցմունք արին։
Ելաւ տանեն մեծ տէրտէրին այն մղտեսի տէր Յակոբին։
Քաղաքն յամէն զայն իմացան եւս առաւել ծեր պառաւնին։
Այն մահադեղ լինի նոցա. միարեբան զայս ասացին։
Ամենեքեան տւին անե՛ծք. մեծ իրիցուն եւ իւր փեսին։
Նա՛ ինչ արժան էր այնպիսուն թող չօռ խմէր խաչկի որդին։
Ջայնն հնչեալ տարածեցաւ, ամենեքեան զայս լսեցին։
Թէ տեղացիք թէ միսաֆիրք, վաճառականքն որ իսանին։
Ո՛վ որ լսեց ասաց նալլաթ՝, զհիսած նեխած այն մատեօյլին՝,
Հիսաթիկութիւն միտ բերեալ՝, յոյժ զարմացեալ հիանային՝,
Ո՛վ սիրելիք ի միտ ամէ՛ք, զեղեալ բաներս որ ձեզ պատմին՝,
Ազա՛ն չէ աստուածապաշտ այլ է ծառայ իւր կեղծ փորին։
Եթէ բանիս վկայ ինդրեմ, կարդա զգիրն Պողոսին։
Վա՛յ եւ եղուկ տայ այնպիսուն, թէ թշնամի է սուրբ խաչին։
Եւ Յոհաննէս սուրբ առաքեալ, հրամայէ նման նշմին։
Թէ ամէն մարդոյ մի հաւատայք այլ ընտրեցէք զչար եւ զբարին։
Զի որկրամուլն է չար տգրուկ, զոր վկայէ իմաստնալին
Ձի ո՛չ յազի ո՛չ շատ ասէ ծառայէ միշտ յորովայնին։
Եթե՛ն մահու գրեալ մեղացն զերեքն ունի իւր քաժին։
Զի որկրամուլ է եւ ազա՛ն, որք են ծնող բղջախոհին։
Իսկ մեք զբանս աւարտեցուք, այս բաւական է զիտողին։
Ով որ ազա՛ն է եւ մատեօլ հազար նալաթ իւր երեսին։
Ինչ քահանայ որ ազահին խորէ զբաժին վարդապետին
Նա բորոտի զինչ քեհելին զինքն անխի՛ծ աստուած հոգին։
Աստուած օրհնէ զժողովուրդն եւ զտանտիրկին կանայք ի միասին։
Ջաստուածաւէր եւ ողորմած բարեբարոյ ծեր պառաւնին։
Թէ շատ թէ գիչ զինչ որ եփեն, քաժին հանեն վարդապետին։
Եղով մեղրով շինած զաղայք եւ չոր մսիկ պաշար ճանփին։
Ինքն փրկի ամէն չարէ, աստուած պահէ դուստր եւ զորդին,
Եւ յետ աստեացս ելանելոյ արքայութիւն հանգչի հոգին՝։

10հին (10) օր եւ Սօֆիայի ար. մարտիրոսնորնմաս եկի մանագրիք ով եղարք քահանայ խիտ պարտու կու մատչեց իս մեղաւորս յիշիք եւ յիշեալ լինէիք տաշի աստուծոյ» (Տես հրատ. իմ «Փ. Պաշտոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ [ապագիք] զբերք ձեռագիր Յիշատակարաններով», Բազմավեկ 1929, էջ 40, Յիշատակարան թիւ 4։

1. Տաղս արտաբերուած է իմ անձնական հին ձեռագիրներու ժողովածուիս Հայերէն ձեռագիր Տաղարանէ մը (էջ 54-56)։ Աղագրեալ տաղս նորոգութեամբ արտադրուած է կէտադրութեանց կատարեալ ամբողջութեամբ միաւսին Զեռագիր-տաղարանիս մասին համառօտ ծանօթութիւններ տուած եմ Բազմավեկի 1929 էջ 284։ Տաղս անտիւլ է. օրինակ մը կը յիշուի Վիննայի Միխիլ. ձեռ. թիւ 436. ձեռագրաց հատուկտորներու ինչ խումբին մէջ, «Քդ. 9 Սիւլբարացի Յակոբ իբրեցուն»... ևն. իմ տաղիս պնշտի տեղ Հ. Տաշեան կը կարդայ քացսն (Յուր. էջ 894)։ Ան սա ծանօթութիւնը կ'աւելցնէ. «Տաղս թերի կը Ֆայ [թդ. 9-10 ինկած ԸԼԱԼՈՎ] թդ. 10բ կ'ըսուի. «Մարտիրոսէ Ղրեմեցւոյ առ որ գրեցաւ, խիտ էր արժան. ՌձԻԳ (1674) յունգարի ժվ.» (Յուր. էջ 894)։ Ըսել է ըստ տաղիս Գ. տաղին վկայութեան Մարտիրոս Ղրեմցի Սիւլբարէ գտնուած է քանի որ ինքն է ան. կատակած յիշուած Արքայպետ մի 1122 կամ 1673ին Շրաքալուսին Սր. Յարութեան (Ջատիկ) եւ Տաղս զբաժ է ՌձԻԳ (1674) Յունգար 17ին, հաւանաբար ի կ. Պոլիս։

Առձեռն ծանօթութիւններ Սիւստրէի Հայ. գաղութին մասին:

Գաղութս գոյութիւն ունէր՝ ինչպէս որ Ղըրմիցեայ տաղն ալ կը վկայէ՝ 1673էն աւտաջ, 1673ին Ղըրմիցի կ'այցելէ հոս, ճիշտ այն ատեն երբ Սոֆիա եւ ուրիշ Պուլկարահայ կեդրոններ կ'այցելէր: Տաղիս վկայութեան համաձայն բաւական թիւով Հայ գաղութ մը կար Սիւստրէ: որուն Սիւստրա կամ Սիւստրացի ձեւը կը գործածէ Ղըրմիցի Հայք ունէին իրենց եկեղեցին, ուր ճրագաւորձին (Ջատիկ) տօնախմբութիւններ կ'ըլլային: Սովորութիւնը գաղութին նման շատ հին էր. եւ ինչպէս որ Ղըրմիցի կը վկայէ. 1673ին «Այնպէս որին եւ այս տարիս» էկեղեցիներ եւ գաղութը կազմակերպեալ վիճակ մը ունէր, Ղըրմիցի կը յիշէ վերաբնակներ, իսկ տեղացիներ կամ առաջնորդ տեղ մղտնակներ Սիւստրացի տեղ Յակոբ. որ ամուսնացած եւ գաւազակ ալ տէր էր, քանի որ որշը կը յիշուի իր փեսան, իսկ իր հօր անունն էր խալիկ. քանի որ երբ Սիւստրացիք կը պարտաւեն եւ կ'անիծեն՝ Տէր Յակոբ՝ իր՝ որկրամուտութեան համար. Ղըրմիցիի տաղին մէկ տողը կ'ըսէ «բոլ լա խմէր խալիկի որդին»: Այսինքն բոլ մահ խմէր խալիկի որդի տեղ Յակոբ: Տեղացի (Սիւստրացի) հայերէ գատ կային նաեւ միսոֆիթք. որոնք արժան սեպուեր են յիշուի տաղիս մէջ, կային նաեւ վստապակներ որ խալիկ այսինքն վստապակներ որ էին յիշուանիւ: Սիւստրէի մասին ուրիշ պատմական վերկայութիւններ կը պակսին ինձի, Պուլկարի մասին սահմանագրութիւն վրայ գտնուող այս հին քաղաքը [ուր ծնած եմ եւ ես 1901 ուրբաթ օր Օգոստոս 9ին] քանիցս ձեռքէ ձեռք անցած է Պուլկարաց եւ Ռուս մանաց մէջ, այժմ կը գտնուի Ռուսման կառավարութեան ներքեւ 1808ին Հայր Բժշկեան վենետիկի Միխիթ. Ուստէն կը հանդիպի քաղաքս ուր 20 տուն Հայ կը յիշէ եւ նոր եկեղեցի մը, որ ըստ երեւոյթին հին եկեղեցեայ տեղ անցած է 1830ին:

Գրիգոր կամախեցի ալ կը խօսի մասնաւոր եւ երկար գլխով մը «Վասն մո-

լորելոյ պոռնիկ սարկաւազին. Սաֆար ա. նուն եւ իսարելոյն ի դիւաց երկուց, որ ի յմբողմէի ի Սիւստրայ քաղաքին».

«Եւ ի վերանալ թուականիս մերոյ Ռէթ. (1630) եղեւ այր մի դիւարաւս ի Սիւստրայ քաղաքին՝ ուսեալ զամենայն ուսումն մանկութեան եւ սակաւ մի գոյութիւն եւ այլ արուեստիւ արծաթագործ եւ քանդակող, որ ասնն թէ՛ չկայ իւր նմանն յայն աշխարհին: Զատաջինն ի Պուլկարահայ աշխարհն կենալով քանի ժա. մանակ մի, կ'ինն անդ մեռանելով, երկրորդ կ'ին ասնելով եւ ինքն ընդ ինքն զղջանալով եւ պահովք ապաշխարութիւն ստանալով...».

Եւն. կամախեցի երկար կը խօսի առասպելապատում գրութեամբ, կը պատմէ այս Սիւստրացիին փորձութիւնները, օտար երկիր թափառումները եւ հուսկ յետոյ անոր Սիւստրէ գտնալը... «Եւ նա ելեալ ըստ քանի սուտ քրիստոսի եւ սուտ մօր նորին, առեալ զմայր եւ զկինն եւ եկեալ են առաջին տեղին ի Սիւստրայ քաղաք, ի մէջ ազգականաց եւ բարեկամաց իւրոց: Եւ սկսաւ քարոզել զերեւումն դիւայ»... Եւն կը շարունակուի պատմութիւնը եւ կ'ըսուի թէ այս դիւաց քարոզչը կը շահի... «Ամենայն կոյր ժողովուրդն որ հաւատաց, բայց երկու երիցանցն՝ Խարսեղ եւ Թորոս անունը, որ ոչ հաւատային նմա: Եւ գնացեալ դիւարախին ի տեղի ինչ պարտիզի որ իւրն ստացանալ յառաջագոյն, զքարին ժողովել ի միջոյ եւ շինել զնա, որ աւերակ էր եղեալ»... Ան զրած ունէր նաեւ «ժողկազիր գլխով եւ ափերով», գրութիւն մը որ իբր նոր աւետարան կը նկատէր եւ նկատել կու տար... «Եւ Զանայր գաւառաբանն եւ զհաշոցն արտաքս ձգել եւ զայն սուտ առասպել զիրքն ի տեղի աւետարանին դնել եւ ընթեռնուլ ի լուսամենեցուն իբրեւ զնոր աւետարան: Եւ քահանայք զաղաղակ բարձեալ առ չար հաւատացեալ ժողովուրդն՝ մինչեւ յժբ լսեմք եւ ոչ խօսեմք, որ հաւատացեր էր

այդ զիւախաբիդ, որ ինքն խարուեր է
զիւաց եւ ձեզ այլ խարաց, որ զիւախաբ
էք: Գիտացի՛ք, որ կու մեռանիմք ի վերայ
մեր աւետարանին եւ չեմք թողուր մու-
ծանել զզիւական գիրքն յեկեղեցի եւ լի-
նել զիւապաշտ... Եւ այլ շատ սաստ եւ
յանդիմանութիւն եւ սպառնալիքս արա-
րին ժողովրդեանն եւ զիւարարին այնմի՛կ՝
քահանայքն: Եւ ընդ մարտմանցն եւ՝ վիճ-
մանցն, կու հասանի մեր Մարկոսն ի վե-
րայ եւ լոյսհոգի նոր նահատակն ի հետ
Մարկոս Մատեոսոյն, որ նուիրակութիւն
էին առնուլ յերուսաղէմայ: Եւ Մարկոսն
նաստիկ յանդիմանութեամբ պախարակե-
ր»... Երուսաղէմի նուիրակը՝ որ ինչ-
պէս եւ վկայուի այդ առնն Սիրիւրոս եկած
էր հանգանափկութեան նպատակաւ՝ կը յա-
ջողի մուրեմալքը եւ իրենց բարոգիչը ուզ-
ղութեան բերել: Ստֆար կը մերժէ իւ-
ստոտ աւետարանը յանձնել եւ սակայն
Մարկոս գաղտնի Ստֆարի մայրը խարե-
լով ձեռք կ'առնէ ձեռագիրը ինը տոտր
որ «գեռ կէսն չէ գրելոյ, որ եօթն ամ
գրել է զզիւախօսութեան չար խրատներն
եւ զիւր գործքեր» : Կամախեցի տեսած
եւ կարդացած է այդ գրութիւնը՝ եւ ժա-
մանակ մ'ալ իր մօտ պահած մինչեւ որ
Զարբաղէ կը տեսնայ եւ փոխ կ'առնէ
գիրքը, բայց «մնաց առ նա» : (Ժամանա-
կագրութիւն հրատ. Երուսաղէմ 1915,
էջ 436-442):

Վկայութիւնս մեզի կու տայ կարեւոր
տեղեկութիւններ Սիրիստրէ Հայ գաղու-
թին մասին: Եւսի 1673 էն առաջ՝ երբ
Ղըրմցի կ'այցելէր, հոս Հայկական ստուար
գաղութ մը կար, երկու քահանաներով,
Բարսեղ եւ Թորոս, ու եկեղեցի: Նշանաւոր
եւ հարուստ պէտք է որ եղած ըլլայ քա-
ղաքիս Հայ գաղութը ուր նուիրակներ ալ
գրկուած են Երուսաղէմէն 1630 ին, եւ
Ղըրմցի ալ կ'այցելէր 1673 ին: Վկայու-
թիւնս կու գայ ապացուցանել որ Սիրիս-
տրէի Հայ գաղութին ծագումը աւելի հին
է քան 1630:

Սիրիստրէի մասին կ'ուզեմ աւելցնել

նաեւ ամենասիրելի մայրիկիս՝ Տիկին Ազ-
նիւ Քիրտեանի կողմէն Նիւ Եորքէն ինծի
խրկուած սա յիշատակները: «Սիրիստրէ
եղած ենք 1900 ին՝ ես եւ հայրիկդ պաշ-
տօնավարած ենք մէկ տարի իբր ուսուցիչ,
եւ անկից քաջուած, քու ծննդեամբդ: Ունէր
պզտիկ դպրոց մը 45-50 աշակերտ ու
աշակերտուհի խառն, յինձմէ եւ հայրիկդ
գառ կար նաեւ մէկ ձայնաւոր-ուսուցիչ
թաղուր Ֆերմանեան անունով: Մանկա-
պարտէզ, մատենադարան չունէր, կար մէկ
եկեղեցի, կարծեմ Սուրբ Աստուածածին
անունով, քահանան էր Տաճատ քահ-
դեմական, որուն համար հայրիկդ էլ-
միածին գրեց բարուք պաշտօնավարութեան
թուղթ մը՝ հաստատուած ժողովուրդին ըս-
տորագրութեամբ, եւ լանջախաչ՝ բերել
տուաւ, եւ որ քու կնքհայրդ եւ միբոսդ
քահանան եղաւ» :

«Հոգաբարձութիւնը կը կազմէին փա-
փազհան, Մարգարեան, Տիրացուեան, միւ-
սեր չեմ յիշեր: Հարուստներն էին Թո-
փազազեան, Համբարձումեան, Փափա-
զեան, ասոնց կը զբաղէին կերպասի վա-
ճառականութեամբ: Մեծ հայութիւն մը
չկար, կարծեմ ամբողջը մէկ 300 տուն
հազիւ, արհեստաւոր եւ խանութպան ամէն
տեսակէ: Հայոց թաղն էր քաղաքի մէկ
ծայրը նեղ եւ առանց սալաքառակի փո-
ղոցներով, հայերը մեծամասնութեամբ թրք-
քախօս էին: Ահա ինչ որ կը յիշեմ Սի-
րիստրէէն» :

Ես ծնած եմ Սիրիստրէ 1901 Օգոս-
տոս 9 Ուրբաթ օր: Մնողքս, (մայրս՝
Ազնիւ Քիրտեան [ծնեալ Գազանճեան] իսկ
հայրս՝ Գառնիկ Քիրտեան) բնիկ երզնա-
կացի էին, 1896 ի աղէտէն յետոյ երկար
թափառումներէ վերջ կու գան Սիրիստրէ
1900 ին, 1901 ին ես կը ծնիմ իսկ ծը-
նունդէս երկու ամիս վերջ ծնողքս կ'առն-
ցին Ռումանիա:

Ահա ինչ որ գիտեմ՝ առ այժմ՝ Սիրիս-
տրէի հին հայ գաղութին մասին:

Գ. Քիրտեան